ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/156

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Անգել» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ

Վ. Պապյանի (լիազորագիր տրված՝ 24.07.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 16.07.2020թ. թիվ 26/26-1/10637-2020 գրությամբ «Անգել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության՝ 10.07.2020թ. թիվ ՊՆ/Պն/02/2158-2020 գրության հիման վրա, 16.07.2020թ. թիվ 26/26-1/10637-2020 գրությամբ նախաձեռնել է «Անգել» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Անգել» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Անգել» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով թիվ ՍՑ-ՆԳ-2020/156 ընթացակարգի նախաձեռնման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը, գտնում ենք, որ նախաձեռնումը հիմնազուրկ է, իսկ նախաձեռնված ընթացակարգը՝ ենթակա մերժման հետևյալ պատճառներով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է՝ «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից»: Այլ ակտերից է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը, ուստի քննակվող հարցերը կուսումնասիրենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք), Օրենքի և Կարգի պահանջների լույսի ներքո:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցվում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

ՀՀ ՊՆ կարիքների համար անհրաժեշտ ապրանքների ձեռք բերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/38» ծածկագրով ընթացակարգին 27.05.2020թ. մանակցության հայտ է ներկայացրել նաև «Անգել» ՍՊԸ-ն: Ընթացակարգի շրջանակում անցկացված մրցույթի արդյունքում «Անգել» ՍՊԸ-ն ճանաչվել է որպես 1-19-րդ, 23, 26, 27 չափաբաժինների մասով ընտրված մասնակից: 18.06.2020թ. նշված ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Անգել» ՍՊԸ-ին է ուղարկվել կնքվելիք պայմանագրի նախագիծը՝ ծանոթանալու, ստուգելու և օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով որակավորման և պայմանագրի ապահովման բանկային երաշխիքները ներկայացնելու համար:

Վերջին ամիսների ընթացքում «Անգել» ՍՊԸ-ն մասնակցության հայտ էր ներկայացրել ՊՆ ՆՏԱԴ կողմից կազմակերպված գնման 2 մրցույթների, որոնցով մի շարք չափաբաժիններով ճանաչվել էր որպես մրցույթի հաղթող: Սակայն ՆՏԱԴ գնահատող հանձնաժողովը հետագայում մերժել է «Անգել» ՍՊԸ-ի հայտերը, քանի որ վերջինս 10

աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովման բանկային երաշխիքներ, ուստի և չի ստորագրել ներկայացված պայմանագրի նախագիծը: Հայտերի մերժման 2 դեպքերում էլ բացակայում է «Անգել» ՍՊԸ-ի մեղքը, քանի որ ՍՊԸ-ին սպասարկող «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն օրենքով սահմանված 10 աշխատանքային օրերի ընթացքում չի տրամադրել որակավորման և պայմանագրի ապահովման բանկային երաշխիքներ:

Նշված 2 դեպքերի փորձից ելնելով, հասկանալով, որ կորոնավիրուսի պատճառով «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն չի հասցնում 10 աշխատանքային օրերի ընթացքում տրամադրելու որակավարման և պայմանագրի ապահովման բանկային երաշխիքները, իմանալով, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/38» ծածկագրով ընթացակարգի՝ վերը հիշատակված չափաբաժիններով ճանաչվել ենք ընտրված մասնակից, չսպասելով կնքվելիք պայմանագրի նախագծի ուղարկմանը, դեռևս 11.06.2020թ. «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին ենք ուղարկել 2 հատ դիմում-հայտեր հիշյալ ընթացակարգի որակավորման և պայմանագրի ապահովման բանկային երաշխիքներ ստանալու համար: Միաժամանակ նույն օրը՝ 11.06.2020թ. թիվ Ա-001 գրությամբ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի վարչության նախագահ Ա. Սարգսյանին հայտնել ենք «Անգել» ՍՊԸ-ի և նրան փոխկապակցված ևս 4 ՍՊԸ-ների կողմից «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի հետ երկարամյա արդյունավետ և պատշաճ փոխգործունեության մասին, շեշտելով սակայն, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/24» և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/30» ծածկագրերով պայմանագրերի շրջանակներում նախատեսված որակավորման և պայմանագրի ապահովման բանկային երաշխիքներ տրամադրելու հարցում բանկը դրսևորել է անհարկի ձգձգումներ, խախտելով բանկային երաշխիքների տրամադրման 10-օրյա ժամկետը: Գրությամբ խնդրել ենք այսուհետև հարգանքով մոտենալ մեր ընկերություններին և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/38» ծածկագրով պայմանագրի որակավորման և պայմանագրի ապահովման բանկային երաշխիքները տրամադրել օրենքով սահմանված 10-օրյա ժամկետում: Նշված գրությունը 11.06.2020թ. առձեռն հաձնվել է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին, սակայն մինչև օրս գրության վերաբերյալ որևէ պատասխան չենք ստացել:

Քանի որ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն 2020թ. հուլիսի 9-ի դրությամբ «Անգել» ՍՊԸ-ին դեռևս տրամադրած չի եղել նշված բանկային երաշխիքները, ի վիճակի չենք եղել ՊՆ ՆՏԱԴ հանձնաժողովին ներկայացնելու պայմանագիրը և պայմանագրի ու որակավորման բանկային երաշխիքները: Այդ պատճառով գնահատող հանձնաժողովը մեր հայտը մերժել է և մեր վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացրել է ՀՀ Ֆինանսների

նախարարություն՝ «Անգել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացի հետագա մասնակցությունից:

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն՝ Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ինչպես նշվեց, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնացելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են՝ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության

դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պամանագիր կնքելուց հրաժարվել է և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը:

Այսինքն, մասնակցի կողմից պարտավորությունների խախտման դեպքում է նոր միայն առկա նրան գնումների գործընթացին մասնակցելու իրացունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր, այսինքն՝ նշված գործընթացը պարտավորությունների խախտման հետևանք է և դրա համար նախատեսված պատասխանատվության միջոց: Իսկ եթե առկա է պարտավորության խախտման համար մեղքի բացակայության հիմքեր, ապա վերանում են նաև հետևանքները՝ պատասխանատվության միջոցները, իսկ սույն դեպքում՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր:

Ինչպես պարզվում է հիշյալ ծածկագրով ընթացակարգի փաստաթղթերից, «Անգել» ՍՊԸ-ն բարեխիղճ, օրենքի տառին համապատասխան և շահագրգիռ կերպով մասնակցել է գնման ընթացակարգին, ճանաչվել ընթացակարգի 1-19-րդ, 23, 26, 27 չափաբաժինների մասով ընտրված մասնակից, դեռևս պայմանագրի նախագիծը չստացած ձեռնմուխ է եղել պայմանագրի կնքման, պայմանագրի ու որակավորման ապահովումների բանկային երաշխիքների ձեռքբերմանը և ներկայացմանը, սակայն իրենից անկախ պատճառներով, այն է՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման բանկային երաշխիքները ուշացնելու պատճառով հայտվել է հայտը մերժված լինելու կարգավիճակում, ընդ որում «Անգել» ՍՊԸ-ն իրավական որևէ լծակ չունի «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից բանկային երաշխիքների տրամադրումը արագացնելու հարցում:

Ինչպես պարզվել է կատարված ուսումնասիրություններով «Անգել» ՍՊԸ-ի հետ տեղի ունեցածը եզակի դեպք չէ հանրապետությունում: 30.06.2020թ. «Առավոտ» օրաթերթում լույս է տեսել «Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ նախագահ Հասմիկ Ենգոյանի հետ հարցազրույցը, որում վերջինս հիմնավորել է կորոնավիրուսի հետ կապված իրավիճակի դժվարություններ հարուցելը ընթացակարգային առումով բանկային երաշխիքների ստացման գործընթացի համար, փաստելով, որ բանկային երաշխիքների տրամադրման ձգձգումները և դրա պատճառով բազմաթիվ տնտեսվարողների հայտերի մերժումը կրում է մասսայական բնույթ:

Վերոգրյալի հիման վրա խնդրում ենք «Անգել» ՍՊԸ-ն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված սույն ընթացակարգը մերժել»:

«Անգել» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/156 ընթացակարգի շրջանակներում 24.07.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.07.2020թ. թիվ ՊՆ/Պն/02/2158-2020 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/38» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) 1-ից 19-րդ, 23-րդ, 26-րդ, 27-րդ չափաբաժինների մասով 11.06.2020թ. գնահատող հանձնաժողովի որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվել «Անգել» ՍՊԸ-ն և սահմանված կարգով վերջինիս Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով ներկայացվել է 18.06.2020թ.պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը: Սակայն, վերջինս Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով ու ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և Պատվիրատուին ներկայացրել պայմանագրի ու որակավորման ապահովումները, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, մերժել է «Անգել» ՍՊԸ-ի հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 24.07.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/156 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/156 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ուսադիրների և թևքանշանների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/38»

ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Անգել» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել Ընթացակարգի 1-19-րդ, 23-րդ, 26-րդ և 27-րդ չափաբաժինների մասով «Անգել» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 06.07.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ քանի որ «Անգել» ՍՊԸ-ն ընթացակարգի հրավերով սահմանված կարգով ու ժամկետում չի ներկայացրել պայմանագրի կատարման և որակավորման ապահովումների բանկային երաշխիքները և չի կնքել պայմանագիրը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Անգել» ՍՊԸ-ի հայտը նշված չափաբաժինների մասով մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության՝ 16.07.2020թ. թիվ 26/26-1/10637-2020 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության՝ 10.07.2020թ. թիվ ՊՆ/Պն/02/2158-2020 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված

մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին:

Կարգի 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝

12) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

13) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ***<u>ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում:</u>***

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ուսադիրների և թևքանշանների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/38» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Անգել» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել Ընթացակարգի 1-19-րդ, 23-րդ, 26-րդ և 27-րդ չափաբաժինների մասով «Անգել» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Ընթացակարգի քարտուղարի կողմից «Անգել» ՍՊԸ-ին 18.06.2020թ. Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով ներկայացվել է պայմանագիր կնքելու մասին ծանուցումը, պայմանագրի նախագիծը և միաժամանակ տեղեկացվել սահմանված կարգով որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 06.07.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ քանի որ «Անգել» ՍՊԸ-ն ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացրել պայմանագրի կատարման և որակավորման ապահովումների բանկային երաշխիքները և չի կնքել պայմանագիրը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Անգել» ՍՊԸ-ի հայտը նշված չափաբաժինների մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի 9.3-րդ, 9.4-րդ և 9.5-րդ ենթակետերի համաձայն՝

9.3 Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ընդ որում՝ պայմանագրում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

9.4 Պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:

9.5 ***<u>Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:</u>***

Ընդ որում՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ տրամադրվում է ընտրված մասնակցին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10</u>***

<u>աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:</u>

Այսպիսով՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանվում է հստակ ժամկետ պայմանագիրը ստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու համար, որոնք չպահպանելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ ուսումնասիրելով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից սույն Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ, գտնում եմ, որ «Անգել» ՍՊԸ-ն հրաժարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/38» ծածկագրով պայմանագիրը կնքելուց և թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը, որի հետևանքով զրկվել է պայմանագիրը կնքելու իրավունքից:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից սույն ընթացակարգի շրջանակում դիրքորոշմամբ հայտնած այն պնդմանը, որ իրենից անկախ պատճառներով, այն է՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման բանկային երաշխիքներն ուշացնելու պատճառով հայտնվել է հայտը մերժված լինելու կարգավիճակում, ընդ որում «Անգել» ՍՊԸ-ն իրավական որևէ լծակ չունի «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից բանկային երաշխիքների տրամադրումն արագացնելու հարցում՝ ներկայացնելով «Անգել» ՍՊԸ-ի կողմից «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին ուղղված 11.06.2020թ. թիվ Ա-001 գրությունը, որտեղ մասնավորապես նշվել է, որ բանկի կողմից անհասկանալի և անհիմն պատճառներով «Անգել» ՍՊԸ-ին չեն տրամադրվել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/24 պայմանագրով նախատեսված տասներկու միլիոն ՀՀ դրամ, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/30-4 պայմանագրով նախատեսված տասներեք միլիոն ՀՀ դրամ երաշխիքները՝ նշելով նաև, որ սույն թվականի հունիսի 1-ին կայացած «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/38» մրցույթով «Անգել» ՍՊԸ-ն եղել է միակ մասնակից և իրավունք է ստացել արտադրելու և իրականացնելու տասներկու միլիոն ՀՀ դրամի ուսադիրների

մատակարարումը և երաշխիք չտրամադրելու դեպքում բանակը կմնա առանց ուսադիրների, ապա սույն մասով կարելի է արձանագրել այն, որ «Անգել» ՍՊԸ-ի կողմից «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին 11.06.2020թ. թիվ Ա-001 գրությունն ուղղվել է դեռևս Պատվիրատուի կողմից Ընկերությանը պայմանագրի ու որակավորման ապահովումներ ներկայացնելը, քանի որ վերջինիս Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով ներկայացվել է նման պահանջ 18.06.2020թ.-ին, ինչպես նաև Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի պահանջով Ընկերության կողմից, բացառությամբ անպատասխան ներկայացված գրության, չի տրամադրվել որևէ այլ փաստաթուղթ, որով կհիմնավորվեր ստեղծված իրավիճակի՝ Ընկերության կամքից անկախ լինելու հանգամանքը:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 16.07.2020թ. թիվ 26/26-1/10637-2020 գրությամբ «Անգել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Անգել» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված

բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**